

Հայ Օգնության Միության «Ռուբինա» Մասնաճիղի

2017ի Տարեկան Տոնավաճառ

4-5 նոյեմբեր

Հայ Օգնության Միության Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիղի վարչության նախաձեռնությամբ և Տոնավաճառի յանձնախումբի իրագործումով՝ 4 նոյեմբեր 2017-ի առաւօտեան ժամը 11-ին, Հայ Կեդրոնի սրահէն ներս,տեղի ունեցաւ մասնաճիղի ՏԱՐԵԿԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌԻ բացման հանդիսութիւնը:

Հանդիսութեան ներկայ էին Հայ Առաքելական Ս. Աստուածածին Եկեղեցոյ հովիւ՝ Հոգեշնորհ Տէր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէքեան, Արժանապատիւ Տէր Կոմիտաս Աւք. Քահանայ Փանոսեան, Հ.Յ.Դ.՝Սողոմոն Թէհլիրեան՝ Կոմիտէի հերթապահ՝ ընկ. Վաչէ Գըլըպոզեան, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ ընկ. Վարսենիկ Սարգիսեան, ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչներ՝ ընկ. Նաթալի Մանուկեան և ընկ.Սիլվի Օհանեան, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, բազմաթիւ հիւրեր եւ ՀՕՄուհիներ:

Տոնավաճառի Յանձնախումբի անունով բացման խօսքը ներկայացուց ատենապետուհի՝ ընկ. Յասմիկ Բարիսեան:Ան՝ երախտագիտութեամբ արտայայտուեցաւ վարչութեան կատարած ներդրումներուն ,ձեռնարկի յաջողութեան ի խնդիր, և բարձր գնահատեց յանձնախումբի անդամները, որոնք հաւատքով, ծառայութեան յանձնառութեամբ և զոհողութեան ոգիով,անվերապահօրէն սոյն աշխատանքը իրագործեցին: Ինչպէս նաեւ սուրիահայ ընկերուհիները որոնք չզրացան իրենց նուիրական մասնակցութիւնը բերելու :

Ան ըսաւ՝ Տոնավաճառը մասնաճիղի մեծագոյն ձեռնարկն է: Երկար ամիսներու տքնաջան աշխատանքէն գոյացած հասոյթը պիտի տրամադրուի ՀՕՄ-ի առաքելութեան ծառայող ծրագիրներուն ,ինչպէս նաեւ՝ նոր սերունդի հայեցի դաստիարակութեան և գոյատեւման երաշխիքը հանդիսացող՝ ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին, որուն ծով կարիքներուն օգնութեան ձեռք երկարելու նպատակով, ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիղի վարչութիւնը տարեկան յատկացում կը կատարէ:

Սողոմոն Թէհլիրեան կոմիտէութեան հերթապահ՝ ընկ. Վաչէ Գըլըպոզեան գնահատեց ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիղի լայնածաւալ գործունէութիւնը,և սրբազան աշխատանքը:Յիշելով Սուրիահայութեան ներքրաւումը, ՀՕՄ-ի շարքերէն ներս:



ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիղի ատենապետուհի՝ ընկհ. Իռեն Թիլիմեան՝ ներկայացուց 2017 տարեշրջանի Տոնավաճառի բացման ժապաւէնի հատման պատուին արժանացած՝ վաստակաշատ ընկհ. Զարուկ Զատրբեանի կենսագրականը: Ան վեր առաւ ընկերուհիին ծառայասէր և աշխատունակ ոգին, երկար տարիներու վաստակը ՀՕՄ-ի շարքերէն ներս, որուն անդամակցած է՝ 1981-ին, նախ որպէս ԼՕԽ-ի անդամ, ապա շարունակելով իր գործունէութիւնը ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիղի ընդմէջէն: Ընկհ. Զարուկ՝ 2016-ին արժանացած է 35 տարիներու անդամակցութեան զարդասէղին: Զանազան պաշտօններու կողքին, ընկերուհին երկար տարիներ մաս կազմած է Տոնավաճառի յանձնախումբին: ՀՕՄ-ը միշտ եղած է իր սրտին մօտիկ:



Հայր Սուրբի օրհնութեամբ Տոնավաճառը բացուած յայտարարուեցաւ, երկու օրերու տեւողութեամբ:

Մօտաւորապէս Երեսուն հայ թէ օտար տաղաւարներէն, որոնք զիրար կը գերազանցէին իրենց ճոխութեամբ, իւրայատուկ էր՝ ՀՕՄ-ի հայկական տաղաւարը, որ կը յատկանշուէր հայրենիքէն բերուած արտադրութիւններու բարձր որակով:



ՀՕՄ-ի կրպակը նաեւ, այցելուին հրամցուց տպածոյ անձերոցներու և այլ արտադրութիւններու, յատկապէս տօնական առիթներու համար պատրաստուած հաւազածոյ մը՝ առաւելագոյն որակով և մատչելի սակերով:



Իսկ ՀՕՄ-ի խոհանոցը շնորհիւ նուիրեալ ՀՕՄուհիներու փորձառու և բժախնդիր աշխատանքին, հարուստ էր հայկական տոհմիկ համադրամ ճաշերու և անուշեղեններու տեսակներով, որոնք գնահատուեցան հայ թէ օտար գնորդներու կողմէ:



Սրահին գաւիթի մասը յատկացուած էր փոքրիկներու յատուկ յայտագրի: Այս տարուայ վիճակահանութիւնը կը պարունակէր զանազան տեսակի պարգեւներ, որոնցմով բախտաւորուեցան գաղութիս զաւակները:

Աննախընթաց տարի մը եւս բոլորեց ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիւղը, յանձնառու ոգիով և նուիրումով: Միշտ հաւատալով, որ ՀՕՄ-ի անձնուրաց նուիրեալներու գործերուն վաստակը պիտի դառնայ կանացի այս հզօր կազմակերպութեան հպարտութեան դափնեպսակը:

Վարդուհի Պարտազճեան

